ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
(26 ապրիլի 1981 թ.)

Գոհություն Աստուծո որ այսօր գտնվում ենք այս պատմական տաճարում և աղոթում ձեզ հետ այս սուրբ սեղանի առաջ:

Մեր կյանքում մի անմոռանալի օր պիտի լինի այս, ինչպես եղան նման Մեր այցելությունները Հռոմի Ս. Պետրոս և Փարիզի Աստվածամոր տաճարներում 1970 թվականին:

Այս շնորհի համար շնորհակալ ենք սիրալիր հրավերին Մեր եղբորը ի Քրիստոս, Նորին Գերազանցություն կարդինալ Ֆրանց Քյոնիկին, որի անցյալ տարվա այցը Ս. Էջմիածին մեծ ուրախություն էր պատճառել Մեզ և մեր Եկեղեցուն:

Ավստրիան և հատկապես այս պատմական գեղեցկաշեն քաղաքը՝ Վիեննան, Մեզ համար խորհրդանշում են համաեվրոպական ոգեկանությունը, գուցե ավելի քան եվրոպական այլ կենտրոններ, որովհետև Ավստրիան գրեթե հավասարապես պատկանում է գերմանական և լատին քրիստոնեական ավանդներին և մշակույթներին:

Ամեն անգամ, երբ Մենք այցելել ենք Վիեննա, հիշել ենք և զգացել թե նա իր ինքնուրույն տեղը ունի Եվրոպայի պատմության և մշակույթի մեջ:

Բարեպաշտ հավատացյալներ, Մենք գալիս ենք մի հեռավոր երկրից, սուրբ գրական Արարատի երկրից՝ Հայաստանից, քրիստոնյա Հայաստանից, ուր Սուրբ Ավետարանը քարոզվեց առաքելական իսկ դարից սկսած, և պատմական հրաշալի իրադարձությունների հոլովույթով նոր հավատքը իր լույսը ազատորեն սփռեց ամբողջ երկրի և ամբողջ հայ ժողովրդի վրա չորրորդ դարի լուսաբացին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի ջանքերով, հայոց Տրդատ թագավորի օրով, որ թեև քրիստոնյաներին հալածել էր տարիներ շարունակ, իբրև դաշնակիցը Հռոմեական Կայսրության, սակայն ի վերջո, լույսը խավարին հաղթելով, նրա հոգին ևս լուսավորվել էր Սուրբ Հոգով:

Նոր հավատքը հայ ժողովրդի համար հանդիսացավ ճշմարիտ մի ոստում խավարից դեպի լույս: Սուրբ Գրիգորը և իր աշակերտները ծավալեցին ավետարանչական հզոր մի գործունեություն ամբողջ Հայաստանում: Կազմվեցին բազում կրոնական համայնքներ, հիմնվեցին բազում եկեղեցիներ: Առաջին հերթին կառուցվեց Սուրբ Էջմիածնի տաճարը 303 թվականին,

ուր և հաստատվեց Մայր Աթոռը Հայ Առաքելական Եկեղեցվո իբրև Աթոռ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության:

Քրիստոնեությունը խոր կերպով թափանցելով հայ ժողովրդի հոգում ու կյանքում, շատ ժամանակ չանցած, հաջորդ դարի երրորդ տասնամյակին, նույն Սուրբ Էջմիածնում, Սուրբ Մեսրոպ վարդապետը հղացավ հայ լեզվի այբուբենը և օրվա Հայոց Հայրապետ Սահակ կաթողիկոսի հետ միասին Սուրբ Գիրքը հայերեն թարգմանեցին հունարենից: Այսպիսով Աստուծո խոսքը ավելի հասկանալի և ավելի հարազատ դարձավ մեր ժողովրդին և, երբ 451 թվականին մազդեական Պարսկաստանը մեծ ուժերով հարձակվեց Հայաստանի վրա արմատախիլ անելու համար Քրիստոսի հավատքը և պարտադրելու մազդեականությունը, ամբողջ հայ ժողովուրդը, հայ իշխանների գլխավորությամբ, ծառացավ պարսիկների դեմ պաշտպանելու համար Քրիստոսի Ավետարանը և հայրենիքի ազատությունը:

Հայ Եկեղեցին սրբացրեց պատերազմում զոհված իշխաններին, որոնց գլուխն էր գտնվում իշխան սպարապետ Վարդան Մամիկոնյանը:

Եվ ի վերջո Հայաստանում հաղթանակեց քրիստոնեությունը, որովհետև, ինչպես վկայում է Ե դարի պատմիչը «Վարդանանց» պատերազմին մասնակից Եղիշե վարդապետը՝ «Հայերը քրիստոնեական հավատքը ընդունել էին ոչ իբրև արտաքին զգեստ, այլ նա դարձել էր նրանց մարմնի գույնը որ մնալու էր անփոփոխ մինչև աշխարհի վերջը»: Այս վկայությունը մնաց ճշմարիտ, և հայ ժողովուրդը համախմբված իր ազգային Եկեղեցու օրհնության ներքև, ապրեց, պայքարեց, հաճախ նահատակվեց վերջին տասնհինգ դարերի ընթացքում:

Մեր օրերին էլ հայ ազգությունը աշխարհում շուրջ յոթը միլիոն համրանքով 95 առ հարյուր մեծամասնությամբ մնում է հավատարիմ իր առաքելական Մայր Եկեղեցուն և նրա պատմական կենտրոն Սուրբ Էջմիածնին: Հայ ժողովուրդը մեկ ազգային Եկեղեցի ունի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, իր գլուխն ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այսօր, Սովետական Հայկական Հանրապետության մեջ ապրում են երեք միլիոն հայեր, Սովետական Միության այլ հանրապետություններում՝ շուրջ երկու միլիոն, իսկ մնացյալ մոտ երկու միլիոնը ցրված է աշխարհի տարբեր երկրներում՝ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում և ամերիկյան ցամաքամասում:

Իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց, քսաներեքհինգ տարիներից ի վեր Մեր ջանքերը ի գործ ենք դնում՝ հետզհետե առավել կազմակերպելու և զորացնելու հոգևոր-եկեղեցական կյանքը Սովետական Հայաստանում, առավել միավորելու և լուսավորելու ամբողջ աշխարհի հայությունը մեր քրիստոնեական հավատքով ու մեր ազգային եկեղեցիով և հետզհետե առավել ամրապնդելու Հայ Եկեղեցու եղբայրական սիրո հարաբերությունները քրիստոնեական մեր քույր Եկեղեցիների հետ, գործոն կերպով մասնակցելով էկումենիկ շարժմունը և աշխարհում խաղաղությունը պաշտպանելու միատեղ աղոթքներին:

Մեր Եկեղեցու էկումենիկ հարաբերությունների ճանապարհին Մեզ համար հոգեկան մխիթարության գագաթնակետ հանդիսացավ Մեր այցելությունը Հռոմ 1970 թվին իբրև հյուրը երջանկահիշատակ Պողոս Զ Սրբազան Պապի, որի անձնավորությունը հմայեց Մեզ իր հոգևոր և եղբայրական քաղցրությամբ:

Մեր օրերին, երբ մարդկությունը կանգնած է տագնապալի կացությանց առաջ, կարծում ենք մեր՝ հոգևորականներիս և հավատացյալներիս առաջ-

նահերթ պարտքն է նախ մեր աղոթքներով ապավինել Աստուծո ողորմությանն ու օգնականությանը, երկրորդ՝ անշարժ մնալ մեր քրիստոնեական հավատքի և պատվիրանների վեմի վրա իբրև փրկության ճշմարիտ ճանապարհ, և երրորդ՝ հավատարիմ մնալ Քրիստոսի արդարության և խաղաղության պատգամներին:

Պետությունների խաղաղ գոյակցությունը և համերաշխ գործակցությունը Միացյալ Ազգերի Կազմակերպության հովանու ներքև, ամենաչերմ իղձն է աշխարհի բոլոր ժողովուրդների և կարծում ենք ի մասնավորի փոքր ժողովուրդների, ինչպիսին է մեր հայ ժողովուրդը, որ այնքան անհավոր չափերով տուժել է և նահատակվել անցյալում, մրցակից պետությունների պատերազմների ընթացքում ոտքի կոխան դառնալով:

Թույլ տվեք այստեղ հիշել Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ի խոսքը արտասանված 1979 թվի հունվարի 1-ին՝

«Տեր Աստված, փրկիր մեզ պատերազմից, ատելությունից, մարդկային կյանքերի կործանումից: Թույլ մի տուր, որ մարդիկ սպանեն իրար: Փրկիր մեզ չարից: Հեռու պահիր պատերազմից, որևէ պատերազմից: Հայր մեր, որ երկնքում ես, Հայր կյանքի, Տվիչ խաղաղության, աղաչում է Քեզ Պապը, զավակը մի ազգի, որ պատմության ամբողջ ընթացքում և մասնավորապես այս վերջին դարում, ամենից շատ տուժողներից մեկը եղավ աշխարհասասան պատերազմի արհավիրքներից ու վայրագությունից: Աղաչում եմ Քեզ հանուն աշխարհի բոլոր ժողովուրդների, հանուն բոլոր երկրների և բոլոր ցամաքամասերի: Աղաչում եմ Քեզ, Իշխան խաղաղության»:

Այս է նաև Մեր աղոթքը, այս է նաև համայն հայ ժողովրդի աղոթքը:

Խաղաղությունը կյանքի առողջ ու ստեղծարար ուժերի ներդաշնակ զարգացող գոյավիճակն է արդարության լույսի տակ: Մեր օրերին, երբ մարդու իմացական հանճարը թռիչք է առել նվաճելու համար նյութական տիեզերքը ամբողջ մինչև արև, աղբյուրը լույսի, ինչքան հրաշալի պիտի լիներ տեսնել հաղթանակը նույն մարդու բարոյական հանճարի, նվաճումը արդարության և խաղաղության լույսի, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի բարձունքներից, աշխարհին բերելով պատգամը Աստուծո՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Թող բոլոր ազգերը և պետությունները ապրեն համերաշխ իրև եղբայրներ ու գործակիցներ այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին է պատկանում հավասարապես, այս արևի տակ, որ բոլորին լուսավորում է հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքև, որ բոլորին է բաշխվում հավասարապես:

Եվ արդ, սիրելի քույրեր և եղբայրներ, «առէք զպատազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: Եւ իրև զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ և զգեցեալ զզրահսն արդարութեան և ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց» (Եփես. Զ 13—16):

Խաղաղություն և օրհնություն ամենեսյանդ. ամեն: